



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 379 - Ա

10 հոկտեմբերի 2019 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
<<ՍԱՐՈՒԽԱՆԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՍԱՐՈՒԽԱՆԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑ>> ԵՎ <<ՎԱՐԴԵՆԻՍԻ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի պահանջներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի 2019թ տարեկան ծրագրին համապատասխան Գեղարքունիքի մարզի <<Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոց>>, << Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոց>> և << Վարդենիսի թիվ 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում ներքին աուդիտ անցկացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- Ղուլոյան Հակոբ - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի վարիչ, աշխատանքային խմբի ղեկավար
- Կյուրեղյան Միեր - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ
- Հայկազյան Արա - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ
- Հովհաննիսյան Գագիկ - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ

Անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբի մեջ ներգրավել համապատասխան մասնագետներ և փորձագետներ:

2. Աշխատանքային խմբին՝ իրականացված աուդիտների արդյունքները սահմանված ժամկետում ներկայացնել ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

10.10.2019

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ



ՄԱՐԶՊԵՏ՝ Подпись: SANOSYAN GNEL 1710830069

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ